ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 324 - Ա **28 դեկտեմբերի 2018 թ.**

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի և «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի դրույթներով

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով 105000 /մեկ հարյուր հինգ հազար/ ՀՀ դրամ հատկացնել մի խումբ քաղաքացիների միանվագ օգնություն տրամադրելու համար՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստին՝ սահմանված կարգով տասնօրյա ժամկետում կատարել գումարի վճարում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

ք.Գավառ

Հավելված
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2018 թ. դեկտեմբերի 28-ի
N 324-Ա որոշման

Ց Ո Ւ Ց Ա Կ
ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂՆԵՐԻ

հ/հ	ազգանուն անուն	հասցե	հատկացված գումարի չափը դրամով	Ծանոթություն
1.	Կեսոյան Արայիկ	Գեղարքունիքի մարզ,գ.Հոլաքար	20000/քսան հազար/	
2.	Ասատրյան Ռուստամ	Գեղարքունիքի մարզ,գ.Նորաշեն	20000/քսան հազար/	
3.	Ադիլխանյան Գրիգոր	Ք.Սևան,Սունդուկյան 19	15000/տասնհինգ հազար/	
4.	Մանուկյան Մանուկ	Գեղարքունիքի մարզ,գ.Վարդենիկ	20000/քսան հազար/	
5.	Վարդանյան Տաթևիկ	Գեղարքունիքի մարզ,գ.Լճափ	30000/երեսուն հազար/	
Ընդամենը			105000/մեկ հարյուր հինգ հազար/	

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՏԱՐ՝ Ս.ԽԼՂԱԹՅԱՆ

Կատարող՝ՖՍՏՀ Վարչություն
Ա.Բաղեյան